կայ. կասկածոտ և խղճահար կ'ըլլան և յաճախ իրենց տկար կամքը կը փոխարինեն ներքին ներոյժ կեանքով մը։ Ասոնց մէջէն է որ կ'ելլան գիտուններ, փիլիսոփաներ և մեծ խորհողներ։

Ուրիշներու քով, ընդհակառակն, ջղային — դնդերային գործունէութիւնը շատ շեշտուած է։ Զօրաւոր ջղայիններ են. անհանդարտ և ստատիկ յուզուող են և յուզումի վիճակները զօրաւոր կ'արտայայտեն։ Իրենց զգացումները բուռն և յորդառատ են, բայց կարճատեւ։ Իրենց կամքը անհաւասար է և քմահաճ։ Փայլուն և զօրաւոր իմացականութիւն մը ունին և օժտուած են հազուագիւտ երեւակայութեամբ մը։ Ահա թէ ինչու մասնաւոր ընդունակութիւն և հակում ունին դէպի արուեստները, նուագը, նկարչութիւնը, գրականութիւնը և թատրոնը։

Ասոնք են խառնուածքներու չորս գլխաւոր տիպարները, համապատասխան հոգեկան պատկերներով։ Անշուշտ շատ ամփոփ են եւ բազմաթիւ բացառութիւններ կան։ Միւս կողմէ այս պարզ տիպարները կրնան միանալ մէկ անձի մօտ և բարդ տիպարներու ծնունդ տալ։

Էականը այն է որ մորթի գոյնէն և արեան ոռոգումէն կարելի է գատել մէկու մը խառնուածքը և հետեւաբար նկարագիրն ու բնաւորութիւնը։

Ամփոփեց՝ Ս. ԲԱՐՍԵՂԵԱՆ　　　　ՏՕՔԹ. Բ. ՀԱՐԹԷՆՊԷՐԿ

ԸՆԹԵՐՑՈՂ

ԴՈՒՆ ԿԸ ՍԻՐԵՍ «ԲՈՒԺԱՆՔ»ը, քանի որ բաժանորդագրուած ես, կը կարդաս և կ'օգտուիս։

ՁԵ՞Ս ՈՒԶԵՐ ՃԻԳ ՄԸ ԸՆԵԼ, տարածելու համար քու թերթդ, բաժանորդագրելով ծանօթներդ կամ նուիրելով տարեկան օրինակ մը, Հայաստանի կամ Գաղութներու հանրային հաստատութիւններէն մէկուն (դպրոց, որբանոց, ընթերցարան), որպէսզի ուրիշներն ալ կարդան, սիրեն և օգտուին «Բուժանք»էն և զարգացնեն զայն։

ԴՈՒՆ ԱԼ ԿԸ ՍԻՐԵՍ ԵՒ ԿԸ ԿԱՐԴԱՍ «Բուժանք»ը, բայց ուրիշէն ղրկուածը։ Գիտցիր սակայն որ չի բաւեր կարդալ, այլ պէտք է ունենալ և պահել «Բուժանք»ը, որ ամէն ատեն կրնայ քեզի համար թակագին խորհրդատու մը ըլլալ։

ՈՒՍՏԻ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԷ, ԿԱՐԴԱ՛ ՈՒ ՏԱՐԱԾԷ «ԲՈՒԺԱՆՔ»ը։